«Հայաստանի շախմատի ակադեմիա»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՌԻՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱՆ Ուսուցչի մասնակցությունը հաստատությանմեթոդմիավորումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին:

ԱՌԱՐԿԱ Շախմատ
ՀԵՂԻՆԱԿ Սեդա Անտոնյան
ՄԱՐԶ Կոտայք
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Նոր հաճնի N 3 հիմնական դպրոց
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վահան Սարգսյա

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3
ԳԼՈՒԽ1.ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴՊՐՈՑՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ:6
1.1. Դպրոցի ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպումն ու վերահսկողության ձևերը.....6
ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ……16
Եզրակացություն ……29
Օգտագործված գրականության ցանկ ……30

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Այսօր համաշխարհային զարգացումը բնութագրվում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ընթացող հիմնարար փոփոխություններով՝ գիտությունների ինտենսիվ զարգացում, նոր տեղեկատվական տեխնոլոգիաներ, ժողովրդավարություն և այլն:

ՀՀ նոր սոցիալ-տնտեսական պայմանները ծնել են նոր հասարակական պահանջներ աճող սերնդի ձևավորման նկատմամբ, որն իրեն գիտակցում է որպես կյանքի ու մշակույթի բարձրագույն արժեք, ակտիվ է ու նախաձեռնող, ունակ է վերափոխելու իրեն և շրջապատող աշխարհը: Այդ տեսանկյունից դպրոցի առաջնահերթ խնդիրը պետք է լինի այնպիսի որակյալ կրթության ապահովումը, որը կհամապատասխանի պետության , հասարակության և անձի պահանջներին:

Կրթության պահանջված որակի ապահովումը դպրոցի գործունեության արդյունքի գնահատման հիմնական չափանիշն է և անմիջականորեն կապված է կրթության մեթոդաբանության , տեխնոլոգիաների, մանկավարժական կադրերի պատրաստվածության բազմակողմանի կատարելագործում, տեխնիկական անհրաժեշտ հագեցվածության ապահովում: Այս համատեքստում հատկապես կարևորվում է դպրոցի մեթոդմիավորումների ակտիվ գործունեությունը՝ որպես կրթության գործընթացի արդյունավետության ապահովման, ուսուցիչների մասնագիտական կայացման և կրթության որակի բարձրացման կարևորագույն միջոց:

Արդյունավետ կրթության կազմակերպման հիմնախնդիրը հուզել է բոլոր ժամանակների մտածողներին՝ հոգեբաններին, մանկավարժներին, գիտնականներին, սոցիլոգներին և այլն:

Կան մի շարք ուսումնասիրություններ դպրոցի մեթոդական գործունեության հիմնախնդրին նվիրված, սակայն ներդպրոցական համակարգի կառավարման սուբյեկտի գործունեության զարգացման և կատարելագործման հիմնախնդիրը դեռևս լիարժեք ուսումնասիրված չէ:

Դպրոցում մեթոդմիավորման աշխատանքների զարգացմանը և այդ համատեքստում ուսուցիչների մասնագիտական գործունեության

կատարելագործման անհրաժեշտությամբ է պայմանավորված մեր հետազոտության կարևորությունն ու հրատապությունը։

Ուսումնասիրության նպատակը՝ դպրոցում ոսումնամեթոդական աշխատանքների կազմակերպման և վերահսկողության գործընթացների ուսումնասիրությունն ու վերլուծությունն է, և այդ համատեքստում մեթոդմիավորումների գործունեության նոր մոդելի առաջադրում։

Նպատակից բխում են հետևյալ խնդիրները.

- Ներկայացնել դպրոցի ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպումն ու վերահսկողության ձևերը :
- Վերլուծել դպրոցի զարգացման գործընթացում մեթոդմիավորների գործունեության դերն ու խնդիրները։
- Ուսումնասիրել և վերլուծահամադրաբար ներկայացնել միջ. դպրոցներում մեթոդմիավորումների գործունեությունը և մշակել
- մեթոդմիավորման գործունեության նոր մոդել։

Հետազոտության օբյեկտ

Հետազոտության օբյեկտը ժամանակակից դպրոցում մեթոդմիավորումների գործունեությունն է։

Հետազոտության առարկա

Հետազոտության առարկան ժամանակակից դպրոցում մեթոդմիավորումների գործունեության արդյունավետ ուղիներն են։

Հետազոտության մեթոդները

Հետազոտությունն իրականացրել ենք դիտման, զրույցի, հարցաթերթի և դպրոցական փաստաթղթերի ուսումնասիրության մեթոդներով։

ԳԼՈՒԽ 1.
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴՊՐՈՑՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ

1.1. Դպրոցի ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպումն ու վերահսկողության ձևերը

Կազմակերպումը կառավարման հիմնական գործառույթներից մեկն է, որի էությունը կազմակերպության նպատակների իրականացման համար անհրաժեշտ միջոցների և պայմանների ապահովումն է: Առանց կազմակերպման հնարավոր չէ ըստ ժամանակի ու տարածության, փոխկապակցված իրականացնել կառավարման մյուս գործառույթները: Փաստորեն կազմակերպման գործառույթն է ապահովում համատեղ աշխատանքի իրականացումը և պայմանավորում է նրա արդյունավետությունը[1, էջ138]:

Հանրակրթական դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական, հոգաբարձուների խորհուրդներ: Հանրակրթական դպրոցում կարող են ձևավորվել խորհրդակցական կամ խորհրդատվական այլ մարմիններ:

Դպրոցի խորհրդակցական մարմին է մանկավարժական խորհուրդը, որը կազմավորվում է մանկավարժական կոլեկտիվի օգոստոսյան առաջին նիստում: Այն ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավաժական խորհրդի գործունեությունը շատ ընդարձակ է: Այսպեսհամաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 15-ի N 954-Ն որոշման մանկավարժական խորհուրդը քննարկում է՝ հանրակրթական դպրոցի զարգացման ծրագիրը և երաշխավորում է այն խորհրդի հաստատմանը: Դպրոցի զարգացման ծրագիրը ներկայացվում է դպրոցի գործադիր մարմնի՝ տնօրենի կողմից: Եվ

մանկավարժական խորհուրդը կարող է առաջարկություններ ներկայացնել և այսպիսով ուղղորդել տնօրենին դպրոցի ուսումնական գործընթացը առավել արդյունավետ կազմակերպելու գործում: Մանկավարժական խորհուրդը քննարկում է նաև՝ հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման հարցերը՝ սովորողների հակումներին ու ընդունակություններին, նրանց կյանքի և առողջության պահպանմանը համապատասխան, ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ տարվող արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման հարցերը, հանրակրթական ուսումնական առարկաների չափորոշիչների և ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, ինչպես նաև նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները և այլ նյութեր: Այս տեսանկյունից օժանդակելով նաև մեթոդական միավորումների գործունեության կատարմանը, հանրակրթական դպրոցում կրթական գործընթացին օժանդակող խորհրդատվական (տեղեկատվական, հոգեբանական, սոցիալ- մանկավարժական, հատուկ մանկավարժական, մեթոդական, առողջապահական և այլ բնույթի) ծառայություններ մատուցելու հարցը, ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցեր:[2]

Ուսումնական գործընթացին վերաբերվող այս և այլ հարցերի վերաբերյալ մանկավարժական խորհուրդը որոշումներ է կայացնում՝ հանրակրթական դպրոցի աշխատանքային ռեժիմի և աշխատանքային շաբաթվա տևողության,հանրակրթական դպրոցի ավագ դասարանի հոսքերի ձևավորման մասին, սովորողներին դասարանից-դասարան (այդ թվում՝ հանրակրթական դպրոցիկազմում՝ հիմնական կրթության 2-րդ մակարդակից 3-րդ մակարդակ փոխադրվելիս) փոխադրելու, ամառային առաջադրանքներ տալու և նույն դասարանում մնալու, ավագ դպրոցի փոխադրական դասարաններում տարեվերջյան քննություններ սահմանելու, սովորողներին քննություններին թույլատրելու, գովասանագրով պարգևատրելու, որևէ առարկայի ուսումնասիրությունից ազատելու, բացակայությունների պատճառով նախատեսված քննական առարկաների որոշմանև քննությունների անցկացման ժամանակացույցի մասին, սովորողներին վերաքննություններ նշանակելու կամ տվյալ ուսումնական տարվա դասընթացը

կրկնելու մասին, հանրակրթական դպրոցի շրջանավարտներին, ըստ կրթական մակարդակների ավարտական փաստաթուղթ (վկայական կամ ատեստատ) տալու, գերազանցության մեդալով պարգևատրելու, հանրակրթական դպրոցի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման մասին և ներկայացվում է տնօրենի հաստատմանը, հանրակրթական դպրոցի ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցերի մասին:

Որպես մանկավարժական խորհրդի աշխատանքների կազմակերպիչ հանդես է գալիս դպրոցի տնօրենը (տնօրենի պաշտոնակատարը), որն ի պաշտոնե խորհրդի նախագահն է:

Հանրակրթական դպրոցում ուսումնամեթոդական աշխատանքներ կազմակերպելը միայն բավարար չէ ցանկալի արդյունքի հասնելու համար: Անհրաժեշտ է նաև կատարված թե՛ ուսումնական, թե՛ մեթոդական աշխատանքների վերահսկողություն:

Վերահսկողության գործառույթը կառավարման կարևորագույն գործառույթն է, առանց որի անհնար է գործնականում արդյունավետորեն իրականացնել կառավարման մյուս գործառույթներ[1, էջ 175] :

Պետական մակարդակում ուսումնամեթոդական աշխատանքների վերահսկողությունն իրականացվում է կրթության կառավարման պետական լիազոր մարմնի՝ ԿԳՄՍ-ի նախարարության կողմից: Նախարարության կից գործում է ՀՀ կրթության տեսչական մարմինը, որը վերահսկողության և օրենքով սահմանված այլ գործառույթներ իրականացնող ՀՀ կառավարության ենթակա մարմին է: Այն կիրառում է պատասխանատվության միջոցներ և հանդես է գալիս ՀՀ –ն անունից:

Համաձայն «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի տեսչությունը՝ ստուգում և ուսումնասիրում է նախադպրոցական, հանրակրթական հիմնական, հատուկ ընդհանուր, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների կրթական գործունեությունը՝ անկախ կազմակերպաիրավական ձևից և ենթակայությունից, այդ թվում՝ կրթության բովանդակությանը համապատասխան կրթական գործընթացի կազմակերպումը, ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի կատարումը, տարեկան ուսումնական ժամանակացույցերի,

դասացուցակների պահպանումը, սովորողների և շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման, գնահատման, ամփոփիչ ատեստավորման, քննակարգերի, աշխատակարգերի պահպանումը, ընդունելության, փոխադրման, տեղափոխման, ավարտման կարգերին համապատասխան՝ սովորողների շարժը, ավարտական պետական փաստաթղթերի ստացումը, պահպանությունը և բաշխումը, գործավարությունը, հաշվետվությունների իսկությունը, պետական կրթական չափորոշիչներին համապատասխան՝ անհրաժեշտ ուսումնագիտական, մեթոդական տեղեկատվությամբ, ծրագրերով, դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով, այլ անհրաժեշտ փաստաթղթերով ապահովվածությունը, կրթության որակի նկատմամբ հաստատությունների կանոնադրական պահանջների կատարումը, հաստատությունների կառավարման մարմինների լիազորությունների իրականացումն ու պահպանումը, կազմում է հաշվետվություններ տեսչության (այդ թվում՝ դրա տարածքային մարմինների) գործունեության արդյունքների մասին և այդ հաշվետվությունը ներկայացնում է լիազոր մարմին[3] :

Անդրադառնալով ներդպրոցական վերահսկողությանը նշենք, որ վերջինիս նպատակն է ստանալ ամբողջական և համակողմանի տեղեկատվություն դպրոցում ուսումնամեթոդական գործընթացի վիճակի մասին և առաջացող խնդիրները լուծելու համար ժամանակին անհրաժեշտ փոփոխություններ կատարել[4] : Ներդպրոցական վերահսկողությունը նաև դիտարկման, հաշվառման, ստուգման և դրանց արդյունքների վերլուծության ամբողջություն է: Նրա էությունն է ճանաչել մանկավարժական աշխատանքի իրական վիճակը, ստանալ ինֆորմացիա այդ մասին, վերլուծել ու պարզել, թե այդ աշխատանքը և նրա առանձին մասերը որքանով են համապատասխանում դպրոցի ժամանակակից խնդիրներին, ինչպես են կենսագործվում ուսումնական ծրագրերը, և ինչ է անհրաժեշտ այնկատարելագործելու համար:

Առանց վերահսկողության հնարավոր չէ բացահայտել ուսումնադաստիարակչական գործընթացի թերությունները և դրանց հաղթահարման ուղին գտնել: Այս տեսանկյունից պետք է նշել, որ վերահսկողությունը թերևս նույնքան կարևոր է, որքան կազմակերպումը, որպես գործառույթ: Յուրաքանչյուր

ուսուցիչ աշակերտին առաջադրանք տալուց հետո ստուգում է դրանց կատարումը, վերհանում սխալները, վերլուծում և այդպիսով հանդես գալով և՛ որպես ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպող, և՛ որպես այդ գործընթացը վերահսկող: Նույն այս սկզբունքով է գործում ներդպրոցական վերահսկողության շրջանակներում դպրոցի ղեկավարը. նա հանդես է գալիս և՛ որպես ներդպրոցական վերահսկողության կազմակերպիչ, և՛ որպես վերահսկող: Նա ձգտում է նախ ստանալ օբյեկտիվ պատկերացում ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ, կատարել նրա համակողմանի վերահսկում, այսինքն՝ ուսումնասիրում և վերլուծում է, ապա այդ հետևությունների հիման վրա կազմակերպում է համապատասխան աշխատանք[5, էջ 4]:

Համակարծիք ենք, որ ժամանակակից դպրոցին առաջադրված խնդիրների լուծման համար անհրաժեշտ վերահսկողությունը պետք է լինի.

1. բազմանպատակ-այսինքն՝ ուղղված պետք է լինի տարբեր հարցերի ստուգմանը (ուսումնադաստիարակչական, մեթոդական, գիտահետազոտական և փորձարարական գործունեություն, դպրոցի ուսումնանյութական բազայի կատարելագործում, սանիտարահիգիենիկ պահանջների կատարում, անվտանգության տեխնիկայի պահպանում և այլն),

2. բազմակողմանի-նշանակում է միևնույն առարկայի նկատմամբ վերահսկողության տարբեր ձևերի և մեթոդների կիրառում (ֆրոնտալ, թեմատիկ, ուսուցչի գործունեության անհատական վերահսկողություն և այլն),

3. բազմաստիճան-միևնույն առարկայի վերահսկողությունը վարչական մարմինների տարբեր մակարդակներով (ուսուցչի աշխատանքը կրթական գործընթացում վերահսկում են տնօրենը, փոխտնօրենները, մեթոդական միավորումների նախագահները, մարզի Կրթության վարչության ներկայացուցիչները և այլն)[6, էջ 1]:

Ընդհանրապես խոսելով վերահսկողության մասին՝ անհրաժեշտ է տարբերակել վերահսկողության ձևերը:

Վերահսկողության ձևը վերահսկողության կազմակերպման եղանակն է: Համաձայն ենք Գոհար Ափոյանի հետ, ով գտնում է, որ ներկայումս ներդպրոցական վերահսկողության ձևերի դասակարգման հիմնախնդիրը մնում է վիճելի, մի

հանգամանք, որը հաստատում է տվյալ հիմնախնդրի առկայությունը մանկավարժության տեսության և պրակտիկայի մեջ[7,էջ 210] : Այսպես, օրինակ, Մ.Լ. Պորտնովը առանձնացնում է վերահսկողության երեք տեսակ՝ նախնական, ընթացիկ, արդյունքային[8,էջ 83-91,143]: Ն.Ա. Շուբինը, միավորելով ձևերն ու մեթոդները մեկ դասա¬կարգման մեջ. տալիս է նրանց հետևյալ համադրումը՝ ընդհանուր նախնական, անհատական, թեմատիկ, համընդհանուր և հրատապային- ընդհանրացնող[9,էջ 206]: Տ.Ի. Շամովան տալիս է և՛ կառուցվածքային, և՛ տրամաբանական, և՛ գործնական առումով առավել օպտիմալ դասակարգումը՝ թեմատիկ և համընդհանուր վերահսկողություն[10,էջ 64] :

Ըստ մեզ առավել ամբողջական է Տ. Ն. Մակարովայի դասակարգումը, համաձայն որի ըստ անցկացման պարբերականության՝ վերահսկողությունը կարող է լինել՝

1. Մուտքային (իրականացվում է ուսումնական տարվա սկզբին),
2. Նախնական (ամփոփիչ ստուգողական աշխատանքներից առաջ, ավարտական դասարանների քննություններից առաջ, նոր ուսումնական տարվան դպրոցի պատրաստականության ստուգում՝ ստուգվում են թեմատիկ պլանները, դասերի անցկացման համար նախատեսված ուսումնական նյութերը),
3. Ընթացիկ (տարվա ընթացքում թեմաների ուսումնասիրությունից հետո, կիսամյակային ամփոփիչ աշխատանքների արդյունքները): Յու. Ամիրջանյանը ևս ընթացիկ վերահսկողությունը կապում է դասերի դիտման, լսման, սովորողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների, նրանց կատարածաշխատանքի ստուգման հետ:
4. Միջանկյալ (տարեվերջին փոխադրական դասարաններում),
5. Ամփոփիչ (քննությունները ավարտական դասարաններում, տարեկան աշխատանքների արդյունքները): Իսկ ըստ ստուգվող առարկաների (օբյեկտների) վերահսկողության կազմակերպման եղանակի կրթական հաստատություններում կիրառվում են վերահսկողության 6 տարբեր ձևեր՝

- անհատական վերահսկողություն:

Նպատակն է ստուգել մեկ ուսուցչի կամ ուսուցիչների խմբի գործունեությունը որևէ կոնկրետ հարցում[4] : Յու. Ամիրջանյանը այս վերահսկողության տեսակին

տվել է ընտրովի այցելություն դասին անվանումը, որը իրականացվում է դպրոցի տնօրենի կամ ուսմասվարի կողմից՝ առանց զգուշացման[11,էջ 436] :

- դասարանական- ընդհանրացնող:

Նպատակն է պարզել տարբեր ուսուցիչների ազդեցությունը տվյալ դասարանի աշակերտների վրա[4]: Ըստ Յու. Ամիրջանյանի դիտարկման այս տեսակը հնարավորություն է տալիս հասկանալ, թե ինչու մի առարկա լավ են սովորում, մյուսը՝ ոչ: Իրականացնում են դպրոցի տնօրենը և ուսմասվարը:

- առարկայական-ընդհանրացնող, որը ենթադրում է կոնկրետ առարկայի հետ կապված վերահսկողական աշխատանքներ: Այս տեսակի դեպքում ըստ Յու. Ամիրջանյանի դպրոցի ղեկավար կազմը կարող է իրենց հետ դասալսման տանել նաև տվյալ առարկայի մանկավարժական վարպետություն ունեցող ուսուցչի:
- թեմատիկ- ընդհանրացնող: Նպատակն է համախմբել մանկավարժական կոլեկտիվը որոշակի մանկավարժական խնդիրների լուծման համար[4] :

Յու. Ամիրջանյանը առանձնացնում է նաև՝ դպրոցի ղեկավարների զուգահեռ այցելությունները տվյալ առարկայի միևնույն թեմայի և տարբեր ուսուցիչների դիտարկման համար, տարբեր փաստաթղթերի ստուգումը, ուսուցիչների հետ զրույցների կազմակերպումը և բրիգադային ստուգումը:

Իսկ Տ. Ն. Մակարովան առանձնացնում է նաև շրջադիտման և համալիր-ընդհանրացնող վերահսկողության տեսակները[12,]:

Ընդհանուր առմամբ որպես ներդպրոցական վերահսկողության առարկա հանդես են գալիս կրթական գործունեության հետևյալ տեսակները.

1. Ուսումնադաստիարակչական աշխատանքը:

Ուսումնադաստիարակչական աշխատանքը ուսումնական հաստատության կրթական գործունեության հիմնական տեսակն է: Այն ներառում է ուսումնական պարապմունքների կազմակերպումը և իրականացումը, սովորողների տեսական և գործնական պատրաստականության աստիճանի գնահատումը ընթացիկ և ամփոփիչ վերահսկողության ժամանակ, ուսուցիչների կողմից Կրթության նախարարության նորմատիվ ակտերի պահանջների կատարումը սովորողների և դպրոցական փաստաթղթերի հետ աշխատելիս: Ուսումնական հաստատությունում ուսումնադաստիարակչական աշխատանքը անմիջականորեն կանոնակարգող

փաստաթղթերն են ուսումնական պլանները և ուսումնական ծրագրերը՝ մշակված պետական կրթական չափորոշիչների և շրջանավարտների որակավորման պահանջների հիման վրա:

Ուսումնադաստիարակչական աշխատանքի վերահսկողության հիմնական տարրերն են՝պարտուսի կատարումը, ուսումնական առարկաների դասավանդման վիճակը, սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների որակը, մանկխորհի, խորհրդակցությունների որոշումների կատարումը, դպրոցական փաստաթղթերի վարման որակը, նախատեսված մինիմումի և ծրագրերիկատարումը, քննությունների նախապատրաստումը և անցկացումը: Այս ամենի վերահսկողության գործընթացը իրականացվում է դպրոցի տնօրենի և նրա տեղակալների կողմից:

Այսպես ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենը, որպես ուսումնական գործընթացի կազմակերպիչ՝ պատասխանատու է հաստատությունում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, ուսումնականծրագրերի կատարման, դասավանդման որակի և սովորողների՝ կրթական չափորոշիչներով սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն մակարդակի ապահովման համար, հսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի,սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ, կանոնակարգում սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը, ուսումնական հաստատության տնօրենի հետ համատեղ իրականացնում է հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների մեթոդական ղեկավարումը, ապահովում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի և տարածքային կառավարման մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող հանձնարարականների կատարումը [13]:

Դպրոցի ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենը կազմում է ուսումնական պարապմունքների դասացուցակը և ուսումնադաստիարակչական աշխատանքների վիճակի մասին հաշվետվություններ [13] :

2. Մեթոդական աշխատանքը:

Մեթոդական աշխատանքի կենտրոնը մեթոդական միավորումն է(Մ/Մ)[6,էջ

Մեթոդմիավորումների աշխատանքի վերահսկողության պատասխանատուն մեթոդմիավորումների նախագահներն են՝ փոխտնօրենի անմիջական ղեկավարությամբ: Դպրոցի ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի գործառույթների մեջ է մտնում առարկայական մեթոդական միավորումների աշխատանքների ղեկավարումը, մանկավարժական աշխատանքի արդյունավետ փորձի ընդհանրացումը և տարածումը, ուսուցման նոր մեթոդների ներդրմանը աջակցելը, գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին ուսուցիչներին հաղորդակից դարձնելը:

Հանրակրթական դպրոցի տնօրենի և դաստիարակչական գծով փոխտնօրենի հետ միասին հրավիրում է առարկայական մասնախմբերի ղեկավարների խորհրդակցություն, պլանավորում է նրանց աշխատանքային տարեկան գործունեությունը՝ դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքները արդյունավետ կազմակերպելու և դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Բացի այդ առարկայական մասնախմբերի գործունեության տարեկան հաշվետվությունն է լսում և տալիս է վերջնական գնահատական:

3. Փորձարարական և գիտահետազոտական աշխատանքը:

Այն կազմակերպվում և անցկացվում է գործող ղեկավարող փաստաթղթերին համապատասխան:

Ուսումնական հաստատություններում փորձարարական և գիտահետազոտական աշխատանքի հիմնական ձևերից են՝ գիտահետազոտական աշխատանքի կատարում (հիմնական, որոնողական, կիրառական), դասագրքեր, ձեռնարկներ, մենագրություններ, ատենախոսություններ, հոդվածներ, գիտական հաշվետվություններ, գրախոսություններ և եզրակացություններ գրելը, կանոնադրությունների նախագծերի, դրույթների, հրահանգների, այլ նորմատիվ փաստաթղթերի մշակում և այլն:

Վերը նշված կետերի վերահսկողությունը դպրոցում իրականացվում է տնօրենի, նրա տեղակալների, մանկավարժական խորհրդի կողմից:

ԳԼՈՒԽ 2

2.1 Հետազոտության արդյունքների ամփոփումն ու վերլուծություն

Արձանագրվող խնդիրների լուծման նպատակով մեր կողմից նշված դպրոցների մի քանի առարկայական մեթոդական միավորմների («բնագիտական», «հայոց լեզու, գրականություն, պատմություն» «հումանիտար») անդամ ուսուցիչների շրջանում իրականացրել ենք հարցումներ, որը ներկայացված է դիագրամներով

Առաջին հարցին թե, ի՞նչ հաճախականությամբ են Ձեր առարկայական մասնախմբերում կազմակերպվում մեթոդմիավորման նիստերը :

Արդյունքները ցույց են տալիս, որ հարցվածների գերակշիռ մասի՝ ուսուցիչների 48%-ի փաստմամբ, ուսուցիչների մեթոդական աշխատանքը կազմակերպող գլխավոր կառույցի՝ առարկայական մեթոդմիավորման հանդիպումներն իրականացվում են ամիսը երկու անգամ, 25 %-ը այդ աշխատանքների իրականացմանը մասնակցում է երկու ամիսը մեկ կտրվածքով: Ասել է թե՝ մեթոդմիավորումների աշխատանքային գործունեությունը կանոնակարգված բնույթ չունի և արդյունավետության տեսանկյունից չի անցկացվում ամենամսյա ձևաչափով Կարծում ենք՝ անպայմանորեն անհրաժեշտ է առարկայական մեթոդմիավորման նիստերը կազմակերպել ամիսը առնվազն երկու անգամ՝ ներառելով նաև գործնական դասեր, առարկայական արտադասարանական միջոցառումներ, գիտագործնական համաժողովներ, մեթոդական փառատոներ և այլ միջոցառումներ: (Տրամագիր.1)



Տրամագիր 1.

Պետք է քայլեր ձեռնարկել առարկայական մեթոդմիավորումների միավորված նիստեր անցկացնելու, որոնց քննարկումային բնույթը կնպաստի ուսումնական գործընթացի տարբեր խնդիրների վերհանմանն ու լուծման ուղիների առաջադրմանը:

Ուսուցիչների մեթոդական աշխատանքը մանկավարժական պարտադիր երևույթ է, որտեղ դպրոցի ղեկավարների և ուսուցիչների մանկավարժական համագործակցությունն է դրսևորվում: Եթե այդ համագործակցությունը չկա, բացակայում է, ապա ուսուցիչը չի կարող որպես սոցիալական միջնորդ հանդես գալ երեխայի հետ փոխհարաբերությունների համակարգում, որտեղ յուրաքանչյուրը ստանձնում է տարբեր սոցիալական դերեր, փոխլրացնելով իրականացնում օբյեկտ-սուբյեկտային, սուբյեկտ–սուբյեկտային փոխհարաբերույթուններ:

Հաջորդ հարցին՝ թե, ի՞նչ հարցեր են առաջադրվում և քննարկվում մեթոդմիավորման նիստերի ժամանակ սուցիչների 40%-ի տոկոսի մոտ մեթոդմիավորման գործունեությունն առավելապես առնչվում է դասալսումներին,

որոնց անցկացման ընթացքում քննարկվում են առարկայի տեսական ու դասավանդման, ուսուցիչների դասավանդման որակի և սովորողների գիտելիքների մակարդակի ուսումնասիրման ու ուսումնական գործընթացին առնչվող տարբեր խնդիրների բացահայտման, դրանց լուծման ուղիների առաջադրման հարցեր:



Տրամագիր 2.

13 %-ը մեթոդմիավորման գործունեության հիմքում դնում է նյութատեխնիկական բազային ու դիդակտիկ պարագաներին առնչվող հարցերը, իսկ ուսուցիչների 25%-ը մեթոդմիավորման աշխատանքը համարում է նախորդ ամսվա գործունեությանն առնչվող ամփոփիչ քննարկում: Ուսուցիչների 22%-ը մեթոդմիավորմանաշխատանքի բովանդակության հիմքում դնում է դասաբաշխմանը, ուսկլաններին, կատարողականին առնչվող հարցերը(տրամագիր 2):

Ինչպես տեսնում ենք, հարցման արդյունքները բազմակողմանիորեն են բացահայտում մեթոդմիավորման իրականացրած գործառույթների շրջանակը, սակայն հարկ է նկատել, որ առաջադրված բոլոր տարբերակների ներառումը

մեթոդմիավորման աշխատանքում կարևորվում է և առավելապես պիտի կախված լինի իրականացման ժամանակահատվածից: Արդյունավերտ կլինի նշված բոլոր բաղադրիչների կարևորումը ուսումնամեթոդական աշխատանքներում:

Երրորդ հարցին, թե դասալսումներ իրականացվու՞մ են մեթոդմիավորման նախագահների(մասնախմբի անդամների) կողմից, տրված էր բաց պատասխանի հնարավորություն Ուսուցիչների մեծ մասը՝ 66%-ը տվել է այո պատասխանը, իսկ 34 %-ը, կարևորելով դասալսումները, պատասխանել են, որ շատ հազվադեպ են դասալսումներ իրականացնում(տրամագիր 3)



Տրամագիր3.

Չորրորդ հարցին, թե ի՞նչն եք համարում առարկայական մեթոդմիավորման գործունեության գլխավոր նպատակը, այս հարցի առընչությամբ հարցվածների 52%- ը գտնում է, որ մեթոդական միավորումների գործունեության գլխավոր նպատակը կրթության որակի ապահովումն է, 23%-ը կարծում է, որ գլխավոր նպատակը դասավանդվող առարկաների ուսուցման մեթոդիկաների համալիրների մշակումն ու ներդրումն է, 25%-ը գտնում է, որ նպատակը ուսուցիչների կողմից ստեղծագործական ինովացիոն նախաձեռնությունների, հեղինակային ծրագրերի և մեթոդիկաների ներդրման խթանումն է(տրամագիր 4)



Տրամագիր4.

Ուսուցիչներին ուղղված հինգերորդ հարցին՝ ըստ Ձեզ մեթոդմիավորման գործունեության թվարկված ո՞ր ձևերն են առավել արդյունավետ կրթության որակի բարձրացման համար: Պատասխանների վերլուծությունները ցույց են տվել, որ ուսուցիչները կրթության որակի բարձրացման համար առավել արդյունավետ են համարել համատեղ դասերը, ուսումնական նախագծերի մշակումը 32%, իսկ ավելի ցածր են գնահատվում գործունեությանը խանգարող դժվարությունների բացահայտումը 11% և տեղեկատվական-մեթոդական բանկի տրամադրումը 13% (տրամագիր 5):



. Տրամագիր.5

Վեցերորդ հարցին, թե մեթոդմիավորման աշխատանքը արդյո՞ք ներառում է ուսուցիչների վերապատրաստմանն առնչվող հարցեր, քննարկումներ, այս հարցին ուսուցիչները պատասխանել են, որ նշված թեմայով հաճախ անցկացնում են խորհրդատվություն, քննարկում: Ստացել ենք այսպիսի հետաքրքիր պատկեր: Ուսուցիչների 84%-ը փաստել է, որ մեթոդմիավորումը հաճախակի է անդրադառնում ուսուցիչների վերապատրաստմանն առնչվող հարցերին, իսկ 16 %-ը տվել է բացասական պատասխան՝ հիմնավորելով, որ ուսուցիչների կատարելագործման, մասնագիտական զարգացմանն ուղղված քայլեր չեն տեսնում մեթոդմիավորման աշխատանքում(տրամագիր 6):



Տրամագիր 6

Որքան բազմազան լինեն մեթոդմիավորման կողմից ուսուցիչների վերապատրաստմանն ուղղված ջանքերը, այնքան ավելի արդյունավետորեն կարող է այն հասնել իր առջև դրված խնդրի կամ խնդրի որևէ մասի լուծմանը:

Յոթերորդ հարցին՝ արդյո՞ք արդյունավետ եք համարում մեթոդմիավորման գործունեությունը, առաջադրվել է պատասխանի երեք տարբերակ: Նշված հարցին ուսուցիչների 65 %-ը ընտրել է տարբերակը, 21%-ը ընտրել է երկրորդ տարբերակը,իսկ 14 տոկոսն ընտրել է երրորդ տարբերակը: Կարելի է ասել, որ մեթոդմիավորման գործունեությունը ուսուցիչների կեսից ավելին գնահատում է արդյունավետ(տրամագիր 7):



Տրամագիր 7.

Առաջին տարբերակը ընտրող ուսուցիչների կարծիքով մեթոդմիավորման աշխատանքը տալիս է ցանկալի արդյունք, իսկ երկրորդ տարբերակն ընտրած ուսուցիչները թերահավատորեն են վերաբերվում մեթոդմիավորման գործունեությանը: Սա խոսում է այն մասին, որ կան այնպիսի մանկավարժներ, որոնց մոտ մեթոդմիավորման գործունեությունը վստահություն և արժանահավատությունչի ներշնչում, և այս առումով դպրոցը անելիքներ ունի: Վերոնշյալ հարցին

պատասխանների երրորդ տարբերակն ընտրած ուսուցիչները դժվարանում են հարցին հստակ պատասխան տալ, քանի որ մեկնաբանում են, որ միշտ չէ, երբ մեթոդմիավորման հետ համագործակցության մեջ են, և մասնագետները նույնպես չեն ապահովում այդ փոխադարձ կապը, ինչը պատճառ է դառնում մի շարք այլ՝ հավելյալ խնդիրների առաջացմանը: Այս դեպքում, իհարկե, շատ մեծ է ուսումնական հաստատության դերը: Վերջինս պիտի համագործակցության եզրեր դնի ուսուցչի և մեթոդմիավորման միջև, բոլոր ուսուցիչները սկզբունքորեն միասնական մոտեցում պիտի ցուցաբերեն սովորողների կրթության, դաստիարակության, առհասարակ սոցիալականացման գործընթացում ի հայտ եկող բազմաբնույթ խնդիրներին:

Ութերորդ հարցին թե ի՞նչն է խանգարում մեթոդմիավորման արդյունավետ գործունեության իրականացմանը՝



Տրամագիր 8.

Ութերորդ հարցի վերաբերյալ հարցվածների 34 %-ը գտնում է, որ մեթոդմիավորման արդյունավետ գործունեությունը չի կազմակերպվում ըստ ուսուցչի մոտիվացիայի հաշվառման սկզբունքի, 38%-ը գտնում է, որ մեթոդմիավորումների գործունեությունը ընդգծված հետազոտական, ստեղծագործական ուղղվածություն չունի, իսկ 28%-ը համոզված է, որ դպրոցներում

չեն իրագործում ուսուցիչների գործունեության հոգեբանամանկավարժական աջակցման ծրագրեր(տրամագիր 8)

Ուսուցիչներին ուղղված իներորդ հարցին, թե առավել ի՞նչին են նպաստում առարկայական մեթոդմիավորման նիստերը, առաջադրել ենք պատասխանի երեք տարբերակներ(տրամագիր 9).



Տրամագիր 9.

Ուսուցիչների մեծ մասի՝ 44%-ի կարծիքով նիստերն առավելապես նպաստում են մեթոդական պատրաստվածությանը, 32%-ի կարծիքով նիստերն իրենցօգնում են մանկավարժական պատրաստվածությանը, իսկ 24%-ին մասնագիտական գիտելիքների կատարելագործմանը

Ուսուցիչներին ուղղված տասերորդ հարցին , թե ի՞նչ թերություններ կամ առավելություններ են տեսնում մեթոդմիավորման աշխատանքում, ստացել ենք հետաքրքիր պատկեր: Նախ նշենք, որ նշված հարցի համար տարբերակներ չենք առաջադրել՝ հիմնավոր և պատճառաբանված պատասխաններ ստանալու համար: Սակայն մանկավարժների մեծ մասը պատասխանները տվել են առանց հիմնավորման(տրամագիր 10):



Տրամագիր 10

Հարցվածներից 76 %-ը նշել է, որ չեն կարող նշել թերություններ: Այսինքն՝ մեթոդմիավորման գործունեությունը այդ ուսուցիչներին բավարարում է: Հարցվածների 24 %-ը որպես թերություն են դիտարկում այն հանգամանքը, որ մեթոդմիավորման աշխատանքը ոչ միշտ է իրենց հուզող ուսումնական խնդիրը բովանդակում: Ուսուցիչներից մի քանիսը առհասարակ անտարբեր են մեթոդմիավորման աշխատանքներին: Հուսանք, որ հարցման արդյունքում ստացված ցուցանիշները հետագայում փոփոխություն կկրեն, և հանրակրթական դպրոցներում բոլոր ուսուցիչները կգնահատեն մեթոդմիավորման գործունեությունը, իսկ վերջինս լավագույնս կիրականացնի իր առջև դրված խնդիրները:

Մեթոդմիավորման աշխատանքը կրտսեր և հիմնական դպրոցում մեծ դերակատարում ունի, քանի որ աշխատանքներ են տարվում ոչ միայն ուսումնական գործընթացի, այլ սովորողների հարմարման ու սոցիալականացման ուղղությամբ, մեթոդմիավորումը աջակցում է դպրոցում բարենպաստ հոգեբանական մթնոլորտի ստեղծմանը, հայտնաբերում է անձի կայացմանը խոչընդոտող պայմանները, նպաստում այդ խնդիրների լուծմանն ու հաղթահարմանը: Շատ կարևոր է, որ մանկավարժները մշտապես կապ պահեն մեթոդմիավորման հետ, լինեն այդ թիմի անդամ, իրականացնեն երեխաների սոցիալականացմանն առնչվող բազմաբնույթ ուսումնասիրություններ և դիտարկումներ

Հաշվի առնելով սովորողի անհատական և սեռատարիքային առանձնահատկությունները, ըստ անհրաժեշտության, պետք է ձեռնարկել դպրոցականների սոցիալականացմանն ուղղված կարիքների հաղթահարման միջոցառումներ, մասնակցել օժտված երեխաների բացահայտման, ուսումնական պլանների մշակման և իրականացման գործընթացին: Միայն այդ դեպքում համատեղ աշխատանքի արդյունավետությունը բարձր կլինի:

Վերջին հարցին, թե մեթոդմիավորումների աշխատանքում ինչի՞ն է կարևորություն տրվում, չենք առաջադրել պատասխանի տարբերակներ: Ուսուցիչները իրենք են նշել պատասխանները: Ստացել ենք այսպիսի պատկեր(տրամագի 11).



Տրամագիր 11

Ուշագրավ է, որ մանկավարժները պատկերացնում և գնահատում են մեթոդմիավորման դերն առաջին հերթին իրենց ինքնակրթության /45 %/, ապա մասնագիտական հմտությունների կատարելգործման առումով /16 %/: 29 %-ը մեթոդմիավորման աշխատանքի կարևորությունը տեսնում է ուսումնական գործընթացում առաջացած խնդիրների լուծման առումով: 10 %-ը այդ կարևորությունը համարում է համագործակցային աշխատանքը:

Կատարված հարցման արդյունքները փաստում են, որ ուսուցիչների մեծ մասը գնահատում է մեթոդմիավորման աշխատանքը՝ այն դիտարկելով որպես ոչ միայն մասնագիտական հմտությունների կատարելագործման, այլև դպրոցին առնչվող բազմաթիվ խնդիրների լուծման առումով: Մանկավարժներից ոմանք թերահավատորեն են մոտենում մեթոդմիավորման գործունեության արդյունավետությանը, սա նշանակում է, որ մեթոդմիավորման աշխատանքը բարելավման կարիք ունի, ինչպես նաև ուսուցիչներին համալիր կերպով պիտի ներգրավի իր աշխատանքներում՝ հաշվի առնելով նրանց կարծիքներն ու տեսակետները:

Մեթոդմիավորումները աշխատանքի կազմակերպման ձևերը պետք է բխեն ուսումնական գործընթացի առանձնահատկություններից և խնդիրներից և չպետք է ձևական բնույթ կրեն: Աշխատանքային պլանում պիտի առանձնացնել առանձին ուղղություններ և աշխատանք տանել ոչ միայն ընդհանուր, այլև մանկավարժական առանձին հարցերի շուրջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Դպրոցի ուսումնամեթոդական աշխատանքների վերահսկողությունը շարունակական գործընթաց է, որը հիմք է դառնում դպրոցում հետագա աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար: Առարկայական մեթոդմիավորումները ստեղծվում են ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով, քանի որ առարկայական կամ տարրական կրթության մեթոդմիավորումները քննարկում են հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերը, ուսումնական պլանների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, մեթոդական ձեռնարկները և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին (դասվարներին) տալիս երաշխավորություններ: Կազմակերպում է մասնագիտական և մանկավարժական-մեթոդական ընթերցումներ,խորհրդատվություններ սեմինարներ, քննարկում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը: Մեթոդմիավորման գործունեությունը չափազանց կարևոր է առարկայի դասավանդման, տվյալ առարկայի դասավանդման ընթացքում մեթոդների կիրառման , առանձին տեխնոլոգիաներին ծանոթանալու, ուսուցիչների մասնագիտական կոմպետենտության, նրա առանձին տարրերի յուրացման համար:

2.Մեթոդմիավորումները ժամանակակաից դպրոցների համար դառնում են զարգացման հիմնական սուբյեկտներ՝ խթանելով ինովացիաների ներդրումն ուսումնամեթոդական գործընթացում, սովորողների կրթության որակի բարձրացումը, ուսուցիչների մասնագիտական որակի բարձրացումն ու գործունեության դրական մոտիվացիայի ապահովումը: Սակայն մեր կատարած հետազոտությունը մեթոդական միավորումների գործունեության ոլորտում ցույց տվեցին , որ մեթոդական միավորումները հիմնականում աշխատում են ավանդական մոդելով և այդ գործընթացում առկա են որոշակի խնդիրներ:

3. Հետազոտության ընթացքում մեր ուսումնասիրած առարկայական մեթոդմիավորումների աշխատանքների վերլուծության արդյունքում բացահայտվեցին դրանց գործունեության արդյունավետությունը խոչընդոտող հետևյալ գործոնները՝ մեթոդական միավորումներում քննարկվող հարցերը ոչ միշտ են արդյունավետ(բովանդակային առումով), առկա են՝ պլանավորված հարցերի ձևական բնույթ, ուսուցիչների ստեղծագործական-հետազոտական աշխատանքների պասիվ վիճակ , սկսնակ ուսուցիչների ոչ բավարար մասնակցություն մեթոդմիավորումների աշխատանքներին, մեթոդմիավորումների ոչ կորդինացված գործունեություն

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Մենեջմենթ»/ տ.գ.դ., պրոֆ. Յու. Մ. Սուվարյանի ընդհանուր ղեկավարությամբ և խմբագրությամբ (երկրորդ՝ լրացված, բարեփոխված հրատարակություն),- Եր.: Տնտեսագետ, 2002:
2. ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 15-ի N 954-Ն որոշում:
3. ՀՀ օրենքը Կրթության պետական տեսչության մասին 2005 թվականի նոյեմբերի 15:
4. http://krtutiun20092019.blogspot.com/2012/08/blog-post.html
5. Միրզոյան Ա., Բեգջանյան Ռ., Մխեյան Գ., «Ներդպրոցական վերահսկողության պլանավորում և իրականացում», Երևան, «Դպրոց կենտրոնների միություն» ԻԱՄ, 2014թ.,:
6. Макарова Т.Н., Внутришкольный контроль: виды, формы, методы, обьекты, Москва 2002, .
7. Ափոյան Գ., «Ներդպրոցական վերահսկողության տեսակների, ձևերի, մեթոդների դասակարգումը», Երևան
8. Портнов М.Л. Труд руководителя школы. М.: / Знание, 1984.
9. Шубин НА. Внутришкольный мониторингам.: Прогресс,-1999.
10. Шамова Т.И. Исследовательский подход в управлении школой.-М.: Педагогика, 1992.
11. Ամիրջանյան Յու. Սահակյան Ա. Ս. Մանկավարժություն, Ե. 2005, :
12. https://docplayer.ru/32554456-Vnutrishkolnyy-kontrol-vidy-formy-metody-obekty-makarova-t-n-k-p-n-zam-direktora-omc-szouo-do-g-moskva.html
13. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=61968
14. Осеева Е. А. Развитие социально-перцептивной компетентности педагогов в системе повышения квалификации.: автореферата дис. . кандидат педагогических наук 13.00.01./ Осеева, Елена Анатольевна . Омск; 2002
15. https://www.arlis.am/documentview.aspx?docID=68299
16. Թոփուզյան Ա., «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները», «Մանկավարժական միտք» հանդես, N3-4, Երևան 2012 թ.,:

17. «Հայաստանի հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության Օրինակելի Կանոնադրություն, Գլուխ 5, կետ 91 ՀՀ կառավարության 2017թ.-ի հուլիսի 6-ի N 801 որոշում:

18. Հակոբյան Ն., Գևորգյան Ս., Հովհաննիսյան Ա., Դացթյան Ա., Մանկավարժական հաղորդակցում, Երևան, հեղինակային հրատարակություն, 2010թ.,-202 էջ

19. Максимова Л.И. Феодорова Л.А. Организация деятельности школы (Образования в дакументах и комментариях).-М. : ООО «Издательство Астрель»: ОО 2002.-173с.

20. Հանրակրթական դպրոցի տնօրենի ուղեցույց, Երևան, Կրթության ազգային ինստիտուտ, 2007թ.-340 էջ

21. Поташник, М.М. Сообщество педагогов школы: колектив или команда? /М.М. Поташник / /Народное образование. -2012 - № 5. – С. 167-174 (педагогический резонанс. тимбилдинг . корпоративная культура. Профессиональная культура. Культура отношений).

22. Шамова Т. И., Управление образовательными системами: Учеб. Пособие для студ. высш. пед. учеб. Заведений /Т. И. Шамова, Т. М. Давыденко, Г. Н. Шибанова, Подред. Т. И. Шамовой, М., Издательский центр, "Академия", 2002, .

23. Գևորգյան Ս.Ռ «Հաղորդակցում » հասկացությունը հոգեբանական գիտության մեջ «հոգեբանությունը և կյանքը» հանդես, Երևան ,2005,

24. Кузьмина Н.В. , Школы для анализа деятельности педагогов: методические рекомендации / Н.В. Кузьмина: Изд-во ЛГУ, 1975.-12с.

25. Симонов, В.П. Диагностика личности и профессианольного мастерства преподавателя. / В.П. Симонов. М.: Рос. Пед.агенство. 1995 – 68с.

26. Шамова Т. И., Управление образовательных процессов в адаптивной школе. М.: 2001.-384с.

27. Л. П. Крившенко, Педагогика: у еб. /Л. П. Крившенко и др., подред., М., Проспект, 2009,